ԵԶԻԴԻ ՔՐԴԵՐ

I.

Հին ազգերի կրօնական և քաղաքական զօրեղ հոսանքներից հալածուած և ճնշուած մի բուռն ժողովուրդ, այսօր տակաւին շնչում է իւր խանձարուրի մէջ, տակաւին ձգտում է ապրել իր կղզիացած կեանքով, առանց ուրիշների հետ որ և իցէ շփումն և յարաբերական կապեր ունենալու. առանց ենթարկուելու արտաքին աշխարհի լուսաւոր և քաղաքակիրթ պայմանների ազդեցութեան. այլ սակ իւր սկզբնական դրութեան մէջ խարխափում է լուռ ու մունջ. ապատամբ հրեշտակների, միշտ արթուն ոգիների անուշ մեղեդիների, մոգական երազների քաղցր տպաւորութեան տակ ննջում է, թողնելով պատմական անցեալի և լուսաւոր ներկայի մէջ տգիտութեան և խաւարամտութեան սոսկալի մի մեծ անջրպետ։

Այդ ապրիր Եզիդի քուրդն է։ Ինչպէս նրա կեանքը իւր ամբողջ կազմակերպութեամբ, իմաստասիրել նրա հոգեկան դրութիւնը, նրա պաշտամունքը, մտաւոր և բարոյական զարգացման աստիճանը, կառավարչական և տնտեսական վիճակը, մօտաւորապէս կ'հասանենք այն եզրակացութեան, որ Եզիդին ներկայացնում է հեթանոսական դարերի բազմաստուածեան կրօնի մի պատկեր, որ իւր մոլար ծառայութիւններն ուրիշներից ծածկելու և գաղտնի պահելու համար միստուածեան է անուանում իրեն։

Իւրաքանչիւր մարմին ընութեան մէջ, որ պարունակում է որ և է անսովոր երևոյթ, գերմարդկային ոյժ, որոնք կարօտում են բարձր գաղափարների և մտքերի կատարեալ բացատրութեան, այդ հանգամանքներից խոյս է տալիս Եզիդին, խորին ակնածութեամբ իւր ծառայական պաշտօնն է մատուցանում դէպի նրանց, խոնարհութիւն և երկիւղածութիւն տիրում են նրա սրտի և հոգւոյ վերայ, որովհետև Եզիդի անհատը նրանց մէջ նկատում է անբերեւոյթ զօրութիւն, շարժուն ոգիներ և վերջապէս աստուածների կամք։ Այդպիսի մոլար և թիւր կարծիքների մէջ է կետրոնացրել Եզիդին իւր իդէալը, այդ սխալ գաղափարներն են, որոնք շարունակ առաջնորդում են նրան և կազմում են նրա խաւարամտութեան և զարգացման միակ յենարանը։

Եզիդի ժողովուրդը ոմանց կարծիքով հին Քաղդէացիք են [1]) կամ քրդական մի որոշ ցեղ, որը իւր կեանքի ամբողջ տևողութեան ընթացքում չէ արել ոչ մի քայլ մտքի և զարգացման շրջանագծից դուրս դէպի յառաջադիմութիւն։

Եզիդիները, որոնք ի բնէ ինչպէս իրենց հարազատ ծննդավայր ամբացած և գրկած ունէին լայնատարած Միջագետքը և նրա բուսականութեամբ հարուստ սահմանները։ Հնադարեան խառն փոթորիկները, և ոչ իսկ քրիստոնէական կրօնի խիստ քարոզութիւնները կարողացան զէթ մի թեթև ազդեցութիւն ունենալ նրա արտաքին և ներքին կեանքի վերայ, ոչ մի ոյժ չ'խախտեց նրա դրութիւնը, այլ ընդհակառակը, որչափ հալածանքն ու նեղութիւնը աւելանում էին նրանց դէմ, այնչափ աւելի հաստատուում էին հիմնաւորապէս իրենց անսխալ կամքի և ուղղութեան մէջ։

Աշխարհաւեր Լէնկթէմուրը իւր աշխարհակալութեան խիստ հոգով կործանեց Եզիդի ցեղի, Արևորդիների չորս գիւղերը. Շօլ, Շմբրշախ, Սաֆար և Մարադայ, 2). բայց անվեհեր Եզիդը դարձեալ չ'յուսահատուեց իւր դառն և օրհասական դրութեան մէջ, այլ աւելի ևս բազմանալով Միջագետքի Սմիթ քաղաքում, իրենց բնակութիւն հաստատեցին։

Աւանդութիւնը շատ անգամ պարզում է պատմութեան մութ կէտերը. Եզիդիների մասին տակաւին գոյութիւն ունեցող աւանդութիւնը հետևեալն է պատմում։ «Լէնկթէմուրի կոտորածից յետոյ, Միջագետում ապրող Եզիդիների մի մասը գաղթեց իւր հայրենի ծնդավայրերից և հաստատուեցին գտաւ Արարատեան դաշտում և նրա բարձրութիւնների վերայ, Օսմանեան կառավարութիւնից ստացած յայտնի ֆիրմանով։»

Քուրդ տարրը ամբողջապէս կազմուած է մի քանի աշիրաթներից (ցեղերից), որոնք ունեն իրենց առանձին կոչումն ու էլաղասին, (ցեղապետ) Զիլանցի, Սիպկանցի, Հայդարանցի, Զալալցի, Մամանցի, Զամալղանցի, Բարաղցի ևն ևն։ Այդ աշիրաթներից բացառութիւն է կազմում Եզիդին, որ կոչւում է Հասընցի աշիրաթ։

Հեթանոսական դարերից մնացած մարդկային մի ծնունդ, բազմաստուածեան ժամանակների մի ժողովուրդ, որ իւր ամբողջ գոյութեան ընթացքում երբէք չէ փոխել իւր տարօրինակ կեանքի անշարժութեան պատկերը, մագաչափ անգամ հետևողութիւն չէ ունեցել դէպի յառաջադիմութիւն, այլ որպէս կենդանի արձան

---

1) Հնախօսութիւն Ինճիճեանի երես. 162.

2) Թոմա Մեծոփեցի.

աչք է դարձրել իւր շրջապատի վերայ, շատ բան է տեսել, և ամէն ինչ արհամարհել և ոչնչութեան մատնել. լուռ և անշարժ կանգնած մնացել է, խաւարամտութեան մի և նոյն կէտի վերայ. կեանքը, երկնային դրախտը, հոգեկան բոլոր ուրախութիւններն ու փրկութիւնը այս աշխարհում համարելով, չէ մտածել վերջին դատաստանի մասին. «մարդ, ինչպէս որ այսօր կայ, նոյնը և պիտի մնայ առանց փոփոխութեան» ահա նրա իդէալը։

Եղիդիների ժամանակակից ոչ մի ազգ, ոչ մի ժողովուրդ չէ ունեցել կեանքի այն աստիճան անշարժութիւնն ու անտարբերութիւնը, որին ինքը Եղիդին է դատապարտուել։ Արդեօք, ինչ արտաքին և ներքին հանգամանքներ կարող էին ազդել այդ աստիճանի զօրեղ կերպով որ և է ժողովրդի հոգւոյ և մտքի վերայ, մգնիսացնել նրան, թմրեցնել և կաշկանդել նրա կամքն ու զգացմունքները։ Այդ հարցերի պատասխաններն իրենց բացատրութեամբ պէտք է փնտրել նոյն իսկ ժողովրդի կեանքի, բնաւորութեան, կենցաղավարական և տնտեսական պայմանների մէջ և, որ առաւելն է, կրօնական այն ամուր կապերի մէջ, որոնցից դուրս Եղիդը ոչինչ չէ ճանաչում։

Այդ ծանր հանգամանքների տակ Եղիդին չէ մոռացել անխախտ պահպանել իւր նախնի հնաւանդ սովորութիւնը մինչև ցայսօր։

Եղիդիները թէպէտ Հայկազն են [1], բայց Արևորդիք կոչուելու պատճառով օտար ժողովուրդ են համարւում, քրդական ցեղերի համանման կազմակերպութիւնն և մասնաւոր սովորութիւնները պահպանելու համար։

II.

Ինչպէս քրդական միւս ցեղերը, նոյնպէս և Հասընցի աշիրաթը իւր առանձին ցեղապետն ունենալով հանդերձ, ունի և իւր առանձին կազմակերպուած այրուձին, որոնք հարկաւոր միջոցներում միշտ կազմ և պատրաստ են, առանձին վարժութիւններ կատարել տօնական հանդէսներում, յառաջ գնալ, դիմաւորել երկրի իշխանին, նոյն իսկ պատերազմներում մասնակցել ցեղապետի հովանաւորութեան ներքոյ։

Այդպիսի ժամանակներում ցեղապետը հագնում է կարճ լոդիկը, որը հասնում է մինչև գօտկատեղը. լոդիկի ձախ կողմը խրուած է զունաւոր կտորների մէջ կեռ և նկարներով զարդա-

[1] Հնախօսութիւն Ինճիճ. գիրք ա. եր. 370.

բուած արծաթեայ դաշոյնը, նրանից փոքր ինչ վերև ջանվարդար կոչուած սուրը, որը ամենալաւ տեսակն է համարւում և ժառանգաբար որպէս սուրբ աւանդ, պահպանւում է որդեցորդի մէկը միւսին յանձնելով։ Լօդիկի վերայից ձգում է ամենանուրբ սպիտակ կտորից ձեռագործուած ծիրանին, որի մէջտեղն յաղթական Ս. Սարգիսն է կանգնած ձիու վերայ, աջ ձեռքին տէգը բռնած, խորտակում է սպիտակ նժոյգի ոտների տակ ամեհի վիշապին։ Ծիրանիի ուսերի վերայ ոսկեթել բանուածներ կան արևի և աստղերի նմանութեամբ, որոնք եղիղիների համոզմամբ կռապաշտական դարերի կրօնական նշանակութիւնն ունին, անվնաս պահպանելու թշնամի և մարտնչող ձեռքերից։ Իսկ կարմիր կօշիկները, սրանք կարծես թէ յիշեցնում են հայոց հին իշխանական տան զգեստները, որ միայն թագաւորի երկրորդին էր շնորհւում, մի ոտին կարմիր կօշիկ հագնելու փառքը։ Նժոյգ երիվարի հպարտ կուրծքը ծածկուած է զանազան ոսկեղէն և արծաթեայ զարդերով, շարուած մետաքսեայ ժապաւէնների վերայ, իսկ թամբը, մերինոսեան ոչխարի բրդից պատրաստուած, ծածկուած է հաստ գունաւոր կտորով, որը հասնում է մինչև գաւակը ձևակերպուած ծաղիկների և զանազան լուսաւոր մարմինների նկարներով։ Թամբի աջ և ձախ կողմերից կախուած են լինում մի մի զոյգ հնադարեան ձևով պատրաստուած լայնաբերան ատրճանակներ, որոնց վերայ քանդակուած են նուրբ ճաշակով զանազան անձնաւորութիւնների, որսորդական կենդանիների և ուրիշ առարկաների նմանողութեամբ պատկերներ, որոնցից իւրաքանչիւրը իւր առանձին նշանակութիւնն ունի։

Զէնքը Եղիդի քրդերի մէջ որպէս աւանդ պիտի պահպանուի սերունդէ սերունդ, զէնքը իւր վսեմ և ազդող նշանակութիւնն ունի տան ընտանիքի մօտ. նա պիտի կախուած լինի պատից կամ վրանի սիւնից։ Այս զէնքերովն է քուրդ մայրը պարծանքով յիշում օտարի մօտ իւր ամուսնոյ և նրա ցեղի անցեալ քաջագործութիւնները, նրա դիւցազնական խրոխտ երգերի տպաւորութիւնների տակ ննջումէ մանուկը, վրանի սիւներից կապուած ճօճի մէջ. այդ զէնքերն են յաջող միջոցները, որոնցով քրդուհին իւր զաւակին դաստիարակում է, նրա մէջ զարթեցնում է ձգտումն դէպի պատերազմ, սէր դէպի իւր պապերի յաղթական գործերը. կաթի հետ ընտելացնում է մանկան գոյութիւն պահպանող պայմանների հետ, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր անհատի համար։

III.

Եղիդի ցեղապետը իւր վսեմ և փառաւոր դրութեան մէջ, վայելում է իւր ընդհանուր հպատակների քաղցր համակրութիւնը. նրա օջաղը (տուն) սուրբ է ամէն մի եղիդի անհատի համար, նրա օջաղը դիմող ոճրագործը քաւում է իւր մեղքերը, իսկ մահապարտը թեթևանում է դատապարտութիւնից։ Իւրաքանչիւր ցեղապետ իւր սեպհական տուրքը կամ տասնորդն ունի. առանց ցեղապետի խորհրդի չի վճռուի ոչ մի հասարակական ներքին և արտաքին խնդիր. իսկ ցեղապետը առանց իւր կրօնաւորների և ծերերի մասնակցութեան և խորհրդի, չի ենթարկի որևիցէ խնդիր իւր կամայականութեան, լինի նա մարդասպանութեան կամ ժողովրդական կարիքների վերաբերեալ գործ։ Իսկ սրա հակառակ մահմեդական թրքահպատակ քուրդ աշիրաթները իրենց ցեղապետական իրաւունքները բոլորովին այլ կերպով են գործադրում։ Նրանք պարտաճանաչ չեն, նրանք միղանչում են պարտուց և իրաւանց օրինական գործադրութեանց մէջ. նրանք խոտորում են կատարել որ և է մի գործ առանց զեղծման և համապատասխան իրենց կոչման և իշխանական մեծութեան։ Իւրաքանչիւր ցեղապետ իւր իշխանութեան տակ ունի ամբողջ գաւառներ և գաւառակներ, սրանց հետ միասին և նրանց տուրքերն ու հարկերը ժողովելու իրաւունքը։ Այդ իրաւունքները ձեռք էին բերում կառավարութիւնից կաշառքով։ Իւրաքանչիւր գաւառում ազգաբնակութեան մեծամասնութիւն կազմող տարրը հայն էր և ուրիշ քրիստոնեայ ժողովուրդ, որոնք պատրաստ էին ամէն կերպ զոհողութիւն անել, անսահման հաւատարմութեամբ ծառայութիւն մատուցանել քուրդ բէգերին։ Այդ կերպ ձեռք բերած իշխանութիւնը քուրդ ցեղապետների ունենում էր իւր դժոխային հետևանքները, ճնշում, աւարառութիւն, կեղեքումն թշուառ ժողովրդի, մինչև անգամ յանդուգն արշաւանքներ կառավարութեան դէմ, և այդ հանգամանքներում արդարութիւնը դարձեալ հանգչում էր քուրդ ցեղապետների կողմը, շնորհիւ թուրք պետութեան թուլութեան և ստոր միտումների։

IV

Կրօնը՝ ինչպէս իւրաքանչիւր ազգի, նոյնպէս և Եղիդի ժողովրդի հասարակական կեանքի վերայ ունեցել է իւր ազդու և զօրեղ ներգործութիւնը, յառաջացնելով այդ տարրի մէջ անպայման հնազանդութիւն և մաքի անշարժութիւն։ Եթէ եղիդիներին

ժամանակակից ազգերն ու ժողովուրդը իրանց նախնիքներից մնացած մաւոր աղքատութիւնն, բարոյական կեանքի սպառնացող զժբախտութիւններն աշխատել են ոչնչացնել, հեռացնել իսպառ իրենց գոյութեան սահմանից, Եզիդին ընդհակառակը՝ ոչ մի արտաքին և ներքին փոփոխութիւն չմտնելով հանդերձ աւելի ամուր կապերով է կապուած իւր անցեալի հետ։ Ոչ մի նեղութիւն, հալածանք թշուառութիւն, նոյն իսկ բարոյական ոչ մի տանջանք չեն խախտել նրան իւր կրօնական սկզբունքից և հաստատ համոզմունքից։ Անցեալի մասին քննողութիւնը մոլորութիւն է համարում, իսկ փոքր ինչ խոտորողը օրինական ճանապարհից, հերձուածող, ահաւասիկ Եզիդի դաւանանքը։

Ինչպէս ասացինք, Եզիդիները կոչւում են արևապաշտ, և որպէս նախնի արևապաշտների մնացորդներ, բնակութիւն էին հաստատել սկզբից Միջագետքում, ինչպէս յիշատակուած է հինգերորդ և մետասաներորդ դարում Ս. Մեսրովբի ժամանակ Գրիգոր Մագիստրոսի Թոնդրակեցիների մասին Ասորոց կաթուղիկոսին գրուած թղթի մէջ։ «Եւ այլ ոմանք ի Զրադաշտ մոգէ՝ մոգք պարսկականք, և այժմ ի նոցունց դեղեալ Արեգակնապաշտք, զոր Արևորդեան անուանեն և ահա են յայդմ դաւառի (ի Միջագետս) բաղումք և ինքեանք քրիստոնեայք զինքեանս յայտնապէս կոչեն։ [1])» Իւրաքանչիւր Եզիդի առաւօտեան արևածագին կանգնում է դէպի արևելք, աջ ձեռքի բութ մատը ուղիղ շրթունքներին մօտեցրած երեք անգամ երկրպագում է արևին իւր աղօթքը կատարած համարելով։

Նախնի արևապաշտութեան ժամանակ արևին զանազան անուններ էին տալիս զանազան ազգերի մէջ. 2) Բահաղ, Միհր, Բաքոս, Վսերիս, Ապողոն, Թամոս, Սատուրնոս ևն ևն. իսկ այժմ Եզիդիները կոչում են Շէմս։ Արևին երկրպագութիւն տալն իսպառ ժխտելով իրանցից, հետևեալ այլայլուած և շինծու բացատրութիւնն են տալիս, գաղտնիքը իրենց մէջ պահելու համար։ «Արևելքը մեզ յիշեցնում է այն աստղը, որ առաջնորդեց երեք իմաստուն մոգերին արևելքից դէպի Յիսուսի ծննդեան տեղը. Յիսուս մանուկը, ինչպէս արևի լոյսը, շողը անտեսանելի է, նա, Աստուած է, նրա Աստուածութիւնը մէկ է, հետևապէս ինչպէս արևը արևելքից լուսաւորում է ամբողջ աշխարհը, այնպէս էլ մանուկ Աստուածը արևի լուսոյ նման պէտք է լուսաւորէ և կենդանութիւն տայ բոլոր աշխարհին։ Արևելքումն են գտնում այն սուրբ և իմաստուն մոգերը, որոնք զուշակել են Յիսուսի

1) Հնախօս՞՞ Ինձիմ. գիրք Բ. երես, 464.

2) Հնախօս՞՞ Ինձիմ. գիրք Բ. երես, 458.

ծննդեան և աստղի երևալու ժամանակը, մինք նրանց մոռանալ չենք կարող, նրանք սուրբ և հրաշագործ մարգարէներ են եղել ամբողջ աշխարհում, իրենց տուած խրատներով ու օրէնքներով»։

Մոգական ուսումն աւելի ծաղկած դրութեան մէջ էր գտնւում հին ժամանակ Միջագետքում և նրա սահմաններում մինչև Քրիստոսի ծննդեան իսկ օրերը։ 1) Այժմ Եզիդին հնագարեան մոգական կախարդութիւնների ամենայատին նշխարներն անգամ պահպանում է անթերի և ճիշտ հետևողութեամբ, որոնք մեզ ստիպում են կարծել, որ Եզիդիները յինուած էին հին մոգական կրօնի սկզբունքների վերայ, որը յետոյ փոխուեց արևապաշտական մոլորութեան։

Ներսէս Շնորհալին երկոտասաներորդ դարում գրում է Թուղթ Միջագետքի Սամոստոս քաղաք, «յաղագս Արևորդեացն դարձի» 2) յիշատակելով նրանց պաշտամունքների համար հետևեալը.

«Այդ ծառ՝ որ բարդի անուանի, ի կռապաշտութեան ժամանակ ի պաշտօն առեալ էր նոցա, յորս և դեռ մտանէին և ի մարդկանէ երկրպագութիւն (առնէին) ընդունէին»։ Եզիդիները այդ վկայութիւնը կեղծելով, ուրիշ կերպ բացատրութիւն են տալիս։ «Բարդի ծառը պէտք է յարգել և սուրբ պաշտօն մատուցանել, որովհետև Քրիստոսի խաչափայտը այդ ծառից էր պատրաստուած»։ Իսկապէս Եզիդիները ոչ թէ բարդի ծառին են տալիս այդ պատիւը, այլ ուռենիին, որը այժմ ևս նրանցից յարգւում է, սուրբ է համարւում և որի կեղևն անգամ մաքրելը յանցանք է և մեղք Եզիդի համար։

Շնորհալին նոյն Սամոստացիներին գրած թղթի մէջ յիշում է, որ չպէտք է լոռտուին 3) և Սատանային պաշտօն մատուցանել, իսկ ընդհակառակը օձը պաշտելի է, նրան սպանել չէ կարելի, ծանր մեղք է. այս ևս իւր պատճառն՝ ունի. Եզիդիները համոզուած են, որ օձը Աստուծոյ անմահ հրեշտակն է եղել. օձի կերպարանքով նա խաբել է նախամայր Եւային. նրա դրութիւնը ժամանակաւոր է, այդ միայն Աստուծոյն է յայտնի։ Սրան նման օրինակ բացատրութիւններ տալիս են և Սատանայի 4) վերաբերութեամբ։ Սատանային անուն տալը մեղք է, նրան համարում են Աստծոյ իններորդ դասի հրեշտակ, որին Աստուած պատժել է

1) Հնախօս՝՝ Ինձիճ. գիրք Գ. երես, 33.

2) Շնորհ. ընդհ. երես. 223.

3) Օձի սնմեղ տեսակն է.

4) Սատանային Եզիդիները կանչում են եւ բեռի, ուղղակի անուն տալը մեղք համարելով.

իւր յանցանքի համար, փոխանակ ուղղակի Աստանայ կոչելու, որ աւելի նախատական է և ստորադասմամբ է գործածւում, անուանում են «մալաքէ թաւուզ» այսինքն հրեշտակ բարձրելոյն Աստուծոյ։

Այդ աներևոյթ ոգին Եզիդիների համոզմամբ պաշտպան է երկրի վերայ այն մահկանացուներին, որոնք իրենց դիրքից ընկած են, բայց մի օր նա կրկին պիտի բարձրանայ և իւր նախկին արժանաւոր տեղը բռնէ Ամենակալի աթոռի առաջ։

V

Աստանային Եզիդիները չեն երկրպագում, բայց որպէս ճշմարտութիւն, անպայման կերպով համոզուած են, որ մի օր կրկին նա իւր նախկին իրաւունքը կստանայ, Աստուծոյ սիրելին կ'դառնայ և այն ժամանակ կ'օգնէ ամբողջ Եզիդի ցեղին։

Եզիդիների կրօնական կեանքի մէջ Արևից յետոյ, մեծ յարգանք է վայելում երկնքի թագուհին, լուսինը. բայց ոչ որպէս կին, այլ ինչպէս տղամարդ հերոս, ըմբիշ, որ աներկիւղ գիշերային ժամերին ճանապարհորդում է և լոյս է տալիս ամբողջ երկրագնդին. լուսինը սուրբ է և յարգւում է Եզիդիներից որպէս քաջութեան նախապատկեր։ Առաջին անգամ լուսնի երևման ժամանակ Եզիդին նայում է դէպի նա ակնածութեամբ և, որչափ կարելի է, աշխատում է ուրախ դէմք ցոյց տալ, մի գուցէ իւր վերայ շարժէ լուսնի բարկութիւնը, որի հետևանքը լինում է մահուան դատապարտել մանուկներին ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւնով։ Եզիդին լուսնի վերայ է կատարում իւր տարեկան բոլոր հաշիւները, նրանով է որոշում յաջող և վատ եղանակները, չորային և անձրևային ամիսները ամբողջ տարուայ։

Օգոստոս ամսոյ վերջերին եղանակը փոքր ինչ սկսում է գովանալ, յուսաւորեան արշալոյսից առաջ, արևելեան կողմից բարձրանում է բոցավառ Շնիկ կոչուած աստղը, նա կարծես անդադար շարժւում է իւր տեղից, երբեմն փայլում է որպէս մի հրեղէն գունդ և լուսաւորում մթութեան մէջ ծածկուած լեռներ ու ձորեր, կրկին նուազելով իւր սկզբնական ձևն է ընդունում։

Այդ աստղի երևման առաջին գիշերը, իւրաքանչիւր տուն պէտք է մի սպիտակ ոչխար մատաղ անէ իպատիւ Շնիկ աստղի, այդ գիշեր ոչ մի ոչխար կամ տաւար չպէտք է դուրս մնայ, ապա թէ ոչ նրա անբուժելի հարուածից ամիջապէս կ'սատակի։

Շնիկի երևումն արդէն պարզ նշան է եղանակի փոփոխութեան, ցրտերի սկզբնաւորութեան, այդ ժամանակ Եզիդի քուրդը շտապում է իւր հրաժեշտը տալ, թողնում է իւր ժամանակաւոր

դրախտանման վայրերը, սառն աղբիւրներն ու հովիտները և աստիճանաբար ցածրանալով դէպի դաշտ, գետնափոր տներում անցկացնում է իւր ձմերային կեանքը։

Որչափ կրօնական սրբութիւնները իրենց բարձր և վսեմ կոչումն ունին Եզիդի ազգաբնակութեան մէջ, այնչափ աւելի խորին լուութեամբ պահպանում են որպէս խորհրդաւոր գաղտնիք բոլոր սուրբ համարուած առարկաները։

Եզիդիները չունին ժողովրդի համար առանձին առանձին աղօթատեղիներ, այլ դրանց փոխարէն ծառայում են Շէյխերի [1]) օջախները, որոնց թիւը շատ քիչ է և ամենագլխաւորը համարւում է Շէմսի (արևի) օջախը, որ գտնվում է Միջագետքի Մուսուլ քաղաքում (Խառան) գլխաւոր կրօնապետի հովանաւորութեան տակ, ուր Եզիդիները որոշեալ ժամանակներում յաճախում են որպէս ուխտատեղի։

Շէյխերը ենթարկւում են կրօնապետի իրաւասութեան, որից ընդունում են կրօնաւորութեան կոչումը օրհնութեան կոնդակով։ Շէյխութիւնը, որպէս ցեղական ժառանգութիւն՝ շարունակւում է սերունդից սերունդ։ Շէյխը ստանում է ժողովրդից իւր տարեկան հասոյթը, իսկ կրօնականին վերաբերեալ հրահանգներ տարածելու ժողովրդի մէջ, ստանում է կրօնապետից։

Մուսուլում կրօնապետը շրջապատուած է աւագ երէցներով, նա իւրաքանչիւր տարի իւր տասանորդն ստանում է ամէնուրեք գտնուած Եզիդի անհատից, և իւրաքանչիւր ամարային քաղցր եղանակում ուղարկում է ժողովրդի մէջ քարոզի պաշտօնով իւր առաքեալները, որոնք կոչվում են Շէյխ, Ղավալ, Փիր և Ֆակ։ Այդ կրօնաւորները իրենց հետ ունին վերցրած մի արծաթեայ աման աղաւնոյ ձևով շինուած, մի երկար մոմակալ, մի հատ մազէ կծիկ, դայիրէ և մի քանի հատ մեծ ու փոքր պաճուճապատանք։ Երբ ազատ լեռների վերայ սկսին են տալիս հազարաւոր քրդական վրաններ, այդ գեղեցիկ եղանակին, Ղավալները շարունակում են իրենց այցելութիւնները ժողովրդին, իւրաքանչիւր վրան ազատ մտնում են և տան մեծն ու փոքրը անխտիր համբուրում են առաքեալների ձեռքը։

Կրօնաւորները այդ սուրբ առարկաները կանոնաւոր կերպով շարում են մի բարձր սեղանի վերայ և իրենք երգում են միասին արաբերէն մի քանի հոգևոր երգեր և ածում են դայիրէի վերայ. այդ միջոցին տան բոլոր անդամները կարգով պարում են սուրբ առարկաների առաջ, որով և քաւում են իրենց մեղքերը։ Կրօնական հանդէսը վերջանալուց յետոյ, մօտենում է տան տէրը համ-

1) Կրօնաւոր։

բուրում է և տալիս է իւր տասանորդը։ Ամբողջ ամարային ամիսներում Եզիդի առաքեալները սար ու ձոր ոտքի տակ տալով, այցելում են ժողովրդին, իսկ աշնան սկզբներին վերադառնում են Մուսուլ մեծ հարստութեամբ։

Եզիդի կրօնաւորը գիտէ մի քանի անգիր աղօթքներ Արաբերէն խօսքերով, որոնց իմաստը, նոյն իսկ բերանացի ասել և հասկանալը՝ հասարակ ժողովրդին արգելուած է, պատճառաբանելով, թէ նրանք վերապահուած են միմիայն կրօնաւորների համար։ Այդ խորամանկութիւնը շէյխերը գործադրում են գլխաւորապէս տգէտ ժողովրդի մէջ իրենց հեղինակութիւնը բարձր պահելու համար։ Շէյխից փոքր կրօնաւորը կոչւում է Փիր, որը ամէն կերպով ենթարկվում է Շէյխի իրաւունքներին և հաւատարապէս յարգանք է վայելում ժողովրդից։ Եզիդի հոգևորականը արգելում է ժողովրդին կարդալ և գրել որևիցէ ազգութեան լեզուով. մտաւոր կրթութիւնը և լուսաւորութիւնը հակառակ է Աստուծոյ և իրենց օրէնքներին. ա) որպէսզի իրենց Շէյխերի գաղտնիքն ու կեղծութիւնը վարագուրուած մնայ. բ) որովհետև Յիսուսին խաչել տուողները հրէից քահանայապետներն ու կարգացողներն են եղել։ Եզիդի ժողովրդի գլխաւոր երդումը կատարվում է Արևով (Շէմս), բաղդով և ցեղապետի օջախով։

Թլպատութեան օրէնքը կատարուում է Եզիդիների մէջ այնպէս, ինչպէս մահմեդականներին յատուկ է. նորածին մանուկը ութ օրից յետոյ պիտի թլպատուի անպատճառ. հակառակ դէպքում, եթէ որոշեալ ժամանակն անցնի, այնուհետև նորածինը թլպատուելու իրաւունք չունի, նա արհամարհուած է հասարակութեան մէջ, նրա ձեռքով մորթուած կենդանուոյ միսը անուրբ է և հարամ։ Հաւատոյ անխախտ պահպանութիւնը այն աստիճան զօրեղ է ազդել Եզիդի քրդի հոգւոյ վերայ, որ մինչև անգամ տգէտ ժողովուրդը իւր զգացմունքներն արտայայտելով դէպի հաւատը, կըրկնում է հետևեալ խօսքերը.

Իման ո կայ ճավայ, Հաւատը՝ աչքի լոյս է,
Ոկի մու քաղանավայ Եթէ նրա մէջ մի մազ անգամ ընկնի,
Խոյի ժը դաս բէկավայ։ Տիրոջ ձեռքն է մեղաւոր։

Եզիդի տարրը կրօնական աշխարհից դուրս ուրիշ ոչինչ չէ կամենում հասկանալ, նրա հասարակական կեանքը անտարբեր է գտնուել դէպի մարդկային գոյութեան պարտուց և իրաւանց խնդիրները. կրօնի այդ սահմանափակ համոզումը յառաջացրել է նրա մէջ մտքերի անփոփոխ դրութիւն։

Եթէ Եզիդին այսօր իւր բնաւորութեամբ կեանքի բոլոր հանգամանքներում զանազանութեան մէջ է գտնուում մահմեդական քրդերից, եթէ նա իւր համոզմունքների ծայրայեղ գործադրու-

թիւններին մէջ հոգեկան մեծ հաճոյք է զգում, այդ կրօնի ազդեցութիւնն է, որ նպաստում է նրա կրքերի հանգստութեանը, որոնք մարդու շուտով են գրաւում շրջապատող անձնաւորութիւնների հետ յարաբերական դրութեան մէջ մտնելու։

Եզիդին պաս չի պահում, նա ծոմապահութիւնը և պասը համարում է փարիսեցիութիւն։ Ամբողջ տարուայ ընթացքում Եզիդին միայն երեք օր է ծոմ և պաս պահում, այն ևս ի պատիւ Սուրբ Սարգիս զօրավարի, որպէս արիութեան հերոսի, իսկ չորրորդ օրը հանդէս են կատարում, ձիարշաւը և մականախաղը առաջին տեղն են բռնում, իւրաքանչիւրը աշխատում է իւր ամբողջ ոյժով փայլել։ խլել յաղթական դրօշակը, աւելի պարծանքով յիշելու Ս. Սարգսի քաջագործ անունը։

Մահմեդական քրդերը մի և նոյն պասը պահում են երեսուն օր, այդ պատճառով Եզիդիների և Մուսուլման քրդերի մէջ անվերջ կռիւներ ու վէճեր են յառաջանում. երկու տարրից մէկը— Մահմեդականը, պնդում է թէ պէտք է պաս պահել սի ռոժ (երեսուն օր) իսկ Եզիդին հաստատում է, պէտք է պահել սէ (երեք) ռոժ։ Հաւանական է կարծել, որ դրանց մէջ տեղի ունեցող հակառակութիւնը «Սի և Սէ» նմանանշիւն բառերից է յառաջացել։

(Նարոնակելի) Մկրտիչ Ֆենյ Զաքարեանց

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ*)

(Գուստաւ Ֆլոբերի)

III.

Արքունիքը լի էր խնջոյքի համար եկած հիւրերով։

Խնջոյքի սեղանը բացուած էր երեք սրահներում. նոցա միջից շարքերով գնում էին փշածառի փայտից սիւներ բրոնզեայ խոյակներով և քանդակներով զարդարուած. երկու իրար կտրող միջանցքների կամարները յենւում էին նրանց վերայ. իսկ երրորդը՝ ամբողջապէս ոսկեզօծ, ձգւում էր դէպի խորքը և յենւում դիմացի ահագին կամարի վերայ, որ կախուած էր հանդիպակաց ծայրում։

Ջահերը, որոնք դրուած էին սեղանների երկարութեամբ, պլպլում էին ինչպէս խարոյկներ, նկարէն կճեայ ամանների, պղնձեայ սկուտեղների, քառակուսի ձիւնաշերտերի և խազողի ողկոյզների մէջ. նոցա կարմիր արտացոլքը ցրուելով, հանգչում էր բարձրում և կրակները փայլում էին ինչպէս գիշեր ժամանակ

---

*) Տես սոյն Թիւ օգոստոս—սեպտեմբեր համարը։